




Հայաստանի Հանրապետության Կարմիր Գրքում գրանցված բույսերը

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինստիտուտի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

Միջազգային Կարմիր Գիրք



Վերջին հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ կենդանիներ և բույսեր ամբողջովին ոչնչացվել են, իսկ շատերը գտնվում են ոչնչացման սպառնալիքի տակ: Որպեսզի մարդկությունն իմանա թե կենդանական և բուսական աշխարհի որ տեսակներն ունեն հատուկ պահպանության անհրաժեշտություն՝ ստեղծվել է «Միջազգային Կարմիր Գիրքը»:

Կարմիր գրքի ստեղծման պատճառները


Մեր մոլորակի բնական հարստությունները միայն առաջին հայացքից կարող են թվալ անսպառ: Այնուամենայնիվ, մարդկային չգիտակցված գործունեության արդյունքում բնությունը մեծ վնասներ է կրել: Կենդանական և բուսական աշխարհի շատ ներկայացուցիչներ անվերադարձ անհետացել են Երկրի երեսից՝ որսագողության կամ բնական միջավայրի ամբողջական ոչնչացման պատճառով: Վայրի բնությունը հատկապես տուժել է XX դարից սկսած, երբ մարդկությունը սկսեց նոր բնակավայրեր նվաճել, անտառների կրճատում, հողատարածքների գրավում, ճանապարհների և քաղաքների կառուցում, շրջակա միջավայրի աղտոտում:

Ինչ է իրենից ներկայացնում Կարմիր գիրքը

Կենդանիների անհետացման անհապաղ դադարեցման նպատակով Կենդանիների Պաշտպանության Միջազգային Միությունը (IUCN) 1963 թվականին հրատարակվեց Կարմիր գրքի առաջին հրատարակությունը: Երկրորդ, ավելի ամբողջական, հրատարակությունը լույս է տեսել 1966-1971 թվականին և ներառում է հինգ հատորներ:

Այսօր IUCN- ն միավորում է 82 երկիր, 111 պետական և 800 հասարակական կազմակերպություն: Այս գրքի վրա աշխատում են մեծ թվով գիտնականներ և հետազոտական խմբեր, շատ երկրներում նույնիսկ ստեղծվել են Կարմիր գրքի հանձնաժողովներ:

Կարմիր գրքի ստեղծման գաղափարի հեղինակը անգլիացի հետազոտող, Վայրի բնության



պահպանության համաշխարհային հիմնադրամի հիմնադիր անդամ, հազվագյուտ և վտանգված տեսակների հանձնաժողովի նախագահ Փիթեր Սքոթն է: Հենց նա է առաջարկել կարմիր գույնի ընտրությունը, որպես ահազանգի խորհրդանիշ:

Կարմիր գրքի երրորդ հրատարակությունը լույս է տեսել 1972 թվականին, իսկ վերջին, չորրորդը՝ 1978-ից մինչև 1980 թվականը: Ցանկը մշտապես թարմացվում է, ավելացվում են նոր տեղեկություններ:

Կարմիր գիրքը ընդգրկում է կենդանիների, բույսերի, սնկերի ցանկ, որոնք գտնվում են ոչնչացման վտանգի տակ: Կարմիր գրքում ներառված բոլոր տեսակները ենթական են խիստ պահպանման իրենց բնակավայրերում:



Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր Գիրք

Հայաստանի Հանրապետությունը աչքի է ընկնում բուսական ու կենդանական աշխարհի վիթխարի բազմազանությամբ: Դրա վառ ապացույցն այն է, որ շուրջ 30 հզ քկմ տարածքում հանդիպում է ծածկասերմ բույսերի շուրջ 3600 տեսակ, ընդ որում ողջ Կովկասում դրանց թիվը հասնում է 7000-ի: Այսինքն՝ ՀՀ-ը, որը զբաղեցնում է Կովկասի տարածքի 1/7 մասը, իր ֆլորայի կազմում ունի Կովկասում աճող տեսակների կեսը: ՀՀ-ը հայտնի է նաև բույսերի ու կենդանիների հազվագյուտ տեսակներով, որոնք զուտ ուսումնասիրության տեսանկյունից իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Մեր տարածքում աճող 3500 տեսակից ավելի քան 400-ը հազվագյուտ հանդիպող տեսակներ են, իսկ դրանցից մոտ 100-ը համարվում են էնդեմիկ տեսակներ, այսինքն՝ հանդիպում են միայն ՀՀ-ում:

Հայաստանում քիչ չեն նաև մշակաբույսերի վայրի ցեղակիցները՝ խնձորենին, տանձենին, կեռասենին, սալորենին, խաղողը, հոնը, հացազգիները և այլն: Հատուկ ուշադրության են արժանի վայրի հացազգիներ՝ ցորենի, գարու, տարբեր տեսակներ աչքի են ընկնում ներտեսակային արտակարգ բազմազանությամբ: Միայն վայրի ցորենի տարատեսակների քանակը գերազանցում է 100-ը:

Մարդու ազդեցության հետևանքով վերջին 2-3 տասնամյակներում մեր բնաշխարհից անհետացել կամ անհետացման եզրին են հայտնվել կենդանիների ու բույսերի բազմաթիվ տեսակներ: Ներկայումս պահպանության կարիք են զգում Հայաստանի ֆլորայի տեսակների գրեթե կեսը, ձկների՝ 11%-ը, երկկենցաղների 17%-ը, սողունների, թռչունների, կաթնասունների շուրջ ¼-ը:

Ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը պահպանելու համար մի շարք երկրների նման, ՀՀ-ում ևս, ստեղծվել են «Կարմիր գրքեր»: Բույսերի «Կարմիր գրքում» ընդգրկված են 386 տեսակ, որոնք կազմում են ՀՀ ֆլորայի 12%-ը: Բույսերը խմբավորված են ըստ հազվագյուտության աստիճանի: Ամենամեծ խումբը կազմում են այն տեսակները, որոնք անհետացման ուղղակի վտանգի ենթակա չեն, սակայն հանդիպում են սակավ քանակով և գրավում են սահմանափակ տարածք: Անուշադրության դեպքում դրանք կարող են շատ արագ անհետանալ:

Առավել փոքր են (8 տեսակ) անորոշ տեսակները, որոնք վատ են ուսումնասիրված: Հնարավոր է, որ դրանք գտնվում են ոչնչացման վտանգի տակ, սակայն ստույգ տվյալները բացակայում են:

Հաջորդ խմբում ընդգրկված են 59 այնպիսի տեսակներ, որոնցից յուրաքանչյուրի թվաքանակը աստիճանաբար պակասում է, իսկ տարածման արեալն էլ՝ կրճատվում: Այդպիսիք են, օրինակ գիհիների շատ տեսակներ, արաքսյան կաղնին, բթատերև խնկենին, երևանյան տերեփուկը: Մեծ թիվ են կազմում (130) ուղղակի ոչնչացման վտանգի տակ գտնվող, անհետացող տեսակները: Դրանք ոչնչացումից փրկելու համար անհրաժեշտ են հատուկ միջոցառումներ: Այդ տեսակներից են արարատյան իշամուլուռը, փոչոտ ճուռակախոտը, կազակական գիհին, դուրեկան թխկին, լիբանանի մեխակը: Եվ վերջին խմբում ընդգրկված են 35 տեսակ, որոնք վերջին տարիներին չեն հանդիպում բնության մեջ, այսինքն համարվում են անհետացած: Սակայն հնարավոր է, որ դրանց ներկայացուցիչները պահպանված լինեն անմատչելի վայրերում: Այդպիսի բույսերից են՝ մանրածաղիկ մեխակը, Առնուղի լրջունը և այլն:


Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի վարման կարգի՝ ՀՀ բույսերի Կարմիր գիրքը քննարկվել է ՀՀ Կարմիր գրքի վարման հանձնաժողովի նիստում, որը տվել է իր դրական եզրակացությունը: ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատվել է ՀՀ կառավարության 29.01.10թ. թվի 72-որոշմամբ և ներառում է 452 տեսակի բույսերի և 40 տեսակի սնկերի նկարագրություն: Բացի դրանից Կարմիր գրքի երկրորդ բաժնում (մաս Բ) ներկայացվում է տեղեկատվություն ևս 223 բուսատեսակների մասին, որոնց վիճակը մտահոգիչ է:

Սույն Կարմիր գրքում ներառված 675 բույսերի տեսակներին տրվել են հետևյալ կատեգորիաներ՝

1. Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR-41 տեսակ): Տաքսոնը համարվում է «Կրիտիկական վիճակում գտնվող», երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Կրիտիկական վիճակում գտնվող» կատեգորիայի որևէ չափանիշ (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

2. Վտանգված տեսակ (EN-48 տեսակ): Տաքսոնը համարվում է «Վտանգված տեսակ» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման շատ բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:
3. Խոցելի տեսակ (VU-3 տեսակ): Տաքսոնը համարվում է «Խոցելի տեսակ», երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Խոցելի տեսակ» կատեգորիային որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:
4. Վտանգման սպառնացող վիճակի մոտ գտնվող տեսակ (NT-1 տեսակ): Տաքսոնը հանդիսանում է «Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ», երբ այն գնահատված է չափանիշներով, բայց չի գնահատված որպես «Կրիտիկական վիճակում գտնվող», «Վտանգված տեսակ» կամ «Խոցելի տեսակ», սակայն մոտ է դրանց և ունի հավանականություն պատկանելու սպառնալիքի որևէ կատեգորիային մոտ ապագայում: Այդ տեսակները տրվում են գրքի առանձին հատվածում՝ սպառնալիքի աստիճանի հակիրճ նկարագրությամբ:
5. Տվյալների անբավարարություն (DD-6 տեսակ): Տաքսոնը պատկանում է «Տվյալների անբավարարություն» կատեգորիային, երբ առկա տեղեկատվությունները դրա թվաքանակի և/կամ արեալի վիճակի մասին համապատասխան չեն անհետացման ռիսկի ուղղակի կամ անուղղակի գնահատման համար: Այդ կատեգորիայի տաքսոնը կարող է լինել լավ ուսումնասիրված, իսկ կենսաբանությունը՝ լավ հայտնի, սակայն գնահատման համար համապատասխան տվյալները առատության և/կամ տարածման վերաբերյալ լինեն անբավարար:
6. Քիչ մտահոգող տեսակ (LC-06 տեսակ): Տաքսոնը հանդիսանում է «Քիչ մտահոգող», երբ այն գնահատված է չափանիշներով և չի գնահատված որպես «Կրիտիկական վիճակում գտնվող», «Վտանգված տեսակ», «Խոցելի տեսակ» կամ «Վտանգման սպառնացող վիճակի մոտ գտնվող»: Այս կատեգորիային են պատկանում ինչպես լայն տարածված, այնպես էլ մեծ թվաքանակ ունեցող տաքսոնները: Այդ տեսակները տրվում են առանձին ցուցակով:

Ծառանման կառուցվածք



Բարձրակարգ բույսեր

	Դասակարգումը	Անվանումը
1.	Բարձրագույն բույսեր › Գետնամուշկեր› Գետնամուշկազգիներ	Գետնամուշկ
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնաբերվել է Մրգուզի լեռնաշղթայից 1982թ.: Հայաստանի ֆլորայի համար հանդիսանում է ոչ միայն նոր տեսակ, այլև նոր ցեղի, նոր ընտանիքի և ընդհանրապես նոր կարգի պատկանող տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Նկարագրությունը: Բազմամյա, մշտադալար խոտաբույս է՝ 5-10 սմ բարձրության: Ցողունները մի փոքր բարձրացող, ուղիղ: Տերևները զծային-նշտարածն, հերթադիր, պարուրաձև, խիտ դասավորությամբ: Տարածումը: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Մրգուզի լեռնաշղթա): Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:
2.	Բարձրակարգ բույսեր › Պտերանմաններ › Ադիանտազգիներ	Ադիանտում Վեներայի վարս
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նկարագրություն: Կոճղարմատավոր, բազմամյա բույս է՝ 35 սմ բարձրության: Վայիթիթեղը՝ 2-3 անգամ փետրաձև բաժանված, լայն-երկարավուն: Վերջին կարգի սեզմենտները՝ կոթունիկների վրա: Գեղազարդային բույս է: Տարածում: Հայաստանում տարածված է Երևանի («Խոսրովի անտառ» պետական արգելոց, Ուրծի լեռնաշղթա), Դարեղեգիսի (Արփա և Դարբ գետերի միախառնման մասը) և Զանգեզուրի (Տաթև վանքի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Հայաստանի սահմաններից դուրս տարածված է Կովկասում, Եվրոպայում, միջերկրածովյան ավազանում, Արևմտյան (Թուրքիա, Իրան) և Միջին Ասիայում, Կենտրոնական Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

3.	Բարձրակարգ բույսեր › Պտերանմաններ › Ասպլենազգիներ	Ասպլեն Վորոնովի
		Կատեգորիան: Վտանգված տեսակ է: Հայտնի է 3 աճելավայրերից, ընդ որում մեկը գտնվում է զգալի հեռավորության վրա: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նկարագրություն: Կոճղարմատավոր, բազմամյա բույս է՝ մոտ 20 սմ բարձրության: Տարածում: Հայաստանում հանդիպում է Լոռու (Սպիտակի, Բազումի լեռնաշղթաներ) և Զանգեզուրի (Կապան) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:
4.	Բարձրակարգ բույսեր › Պտերանմաններ › Ծովոսպազգիներ	Ծովոսպ լողացող
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում, կապված մելիորացիայի և լճերի բուսածածկման պատճառով աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Նկարագրություն: Ջրի մակերեսին լողացող ոչ մեծ պտեր՝ օվալա-էլիպսաձև տերևներով: Տերևները դասավորված են օղակաձև, 3-ական, երկուսը՝ ջրի մակերեսին լողացող, վերևից ծածկված խոզանման սպիտակ մազիկներով, մեկը՝ թելանման բաժանված, կախված ջրում: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում, Լոռու սարահարթի լճերում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ պոպուլյացիայի վիճակը և ծավալը ճշտելու նպատակով:

5.	Բարձրակարգ բույսեր › Պտերանմաններ › Հիպոլեպիդագգիներ	Արժվապատեր տավրիական
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. Կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկարագրություն: Բազմամյա բույս է, հաստ սողացող կոճղարմատով: Վայերը՝ մինչև 2 մ բարձրության, երկար կոթուններով: Թիթեղը՝ վառ կանաչ, կաշենման: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Ներքին Հանդ գյուղի շրջակայք): Հայաստանից բացի աճում է Ղրիմում, Մեծ Կովկասում, Թալիշում: Պահպանության միջոցառումներ: Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:
6.	Բարձրակարգ բույսեր › Մերկասերմեր › Նոճագգիներ	Գիհի կազակական
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Արեալը մասնատված է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկարագրություն: Ցածր, սովորաբար հողի վրա փոված թուփ է, մինչև 50 սմ բարձրության: Տերևները՝ փայլուն, վառ կանաչ, նշտարաձև-գծային, սրացած, մեջքի կողմից ուռուցիկ և կեսի մոտ փոս ընկած օվալ գեղձով: Կոճերը՝ մանր, 4-6 մմ տրամագծով: Տարածում: Հանդիպում է Սևանի (Փամբակ, Դարանակ), Դարեղեգիս և Մեղրում (Վահրավար, Գողթան լեռնագագաթի լեռնաճյուղեր) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու և նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:

7.	Բարձրակարգ բույսեր › Մերկասերմեր › Կենագգիներ	Կենի հատապտղային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Երրորդական դարաշրջանի այս ռելիկտային տեսակը տարածված է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում՝ առաջացնելով մի քանի համեմատաբար խոշոր պուրակներ և հանդիպելով առանձին ծառերի ձևով հաճարի և կաղնու անտառներում: Տեսակի աճման պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել բնակության շրջանի կրճատմանը: Նկարագրություն: Մշտադալար ծառ է, մինչև 25 մ բարձրության, կարմրամոխրագույն բնով մինչև 1 մ տրամագծով, հարթ կամ թիթեղիկավոր: Տերևները՝ 5-8 տարի պահպանվող, երկարանշտարած, տափակ, ելուստային ջղերով, սուր, կարճ կոթուկով, փայլուն: Հատապտուղը՝ վառ կարմիր: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի (Ախնաբաղի, Ոսկեպարի կենտ պուրակներում և հարակից անտառներում) և «Շիկահող» պետական արգելոցում: Աճում է նաև Կովկասում, Եվրոպայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկի «Ախնաբաղի» կենտ պուրակում:
8.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Սոխագգիներ	Սոխ ակակա
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է միայն մեկ լոկալիտետ տեսակի ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. մկ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված աճելավայրի կորստի հետ: Նկարագրություն: Սոխուկավոր բույս է՝ 6-12 սմ բարձրության: Ծաղկաբույլը՝ կիսագնդաձև բազմածաղիկ: Ծաղկապատը՝ աստղաձև կամ ձագարաձև զանգականման, մասերը՝ էլիպսաձև գծային, կլոր կամ գոգավոր ծայրով, խամրոտ սպիտակ կամ մանուշակագույն-վարդագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջան, Ագարակի շրջակայքում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, ստեղծվել նոր ԲՀՊՏ Ագարակի շրջակայքում:

9.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Շքանարգիզագգիներ	Զնձադիկ Արտյուշենկոյի
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է 2 ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Հիմնական սպառնալիքը ծաղիկների հավաքն է որպես արժեքավոր գեղազարդային բույս և նատառների հատումը: Նկարագրություն: Սոխուկավոր բույս է: Տերևները՝ երկարավուն-նշտարաձև, բաց-կանաչ, անփայլ: Ծաղկակիրը՝ ծաղկի ժամանակ տերևներից երկար: Ծաղիկները՝ սպիտակ կամ կրեմագույն, 35-40 մմ երկարության, ներքև թեքված: Տարածում: Հայաստանում հանդիպում է Իջևանի (Աչաջուր, Գետահովիտ, Թեղուտ գյուղերի շրջակայքում) և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Հայաստանից բացի աճում է Թալիշում: Պահպանման միջոցառումներ: Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:
10.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Հովանոցավորներ	Թամամշյանիելա կարմրավուն
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. Կմ-ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս է՝ 40-90 սմ բարձրության, երկար սողացող կոճղարմատով: Արմատամերձ տերևները՝ կրկնակի փետրաձև հատված: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Լոռու ֆլորիստիկական շրջանում (գարգառ գյուղի շրջակայք): Հայաստանից բացի աճում է Մեծ Կովկասյան լեռների վրա, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում, Հյուսիսարևելյան Անատոլիայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

11.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Նվիկազգիներ	Նվիկ կոնոֆալոսային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնաբերվել է վերջերս «Հայաստանի ֆլորան» աշխատության համար նվիկ ցեղի մշակման ժամանակ: Հանդիպում է հանրապետության հարավում, տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա միատուն ուղիղ կանգնած խոտաբույս է՝ ուղղահայաց ձվաձև կամ համարյա գնդաձև պալարով: Կոթունավոր տերևները՝ 3-4, նետաձև: Տարածում: Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի (Կապան) և Մեղրու (Բերդաքար, Կալեր, Վահրավար, Շվանիձոր, Նյուվաղի) ֆլորիստիկական շրջաններում: Բացի Հայաստանից աճում է Նախիջևանում, Անատոլիայում, Հյուսիսային Իրաքում, Հյուսիսային Իրանում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ:
12.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Թաղաղուազգիներ	Թաղաղու դրիմյան
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն երկու ֆլորիստիկական շրջաններում, թեև աճելավայրերում բավականին առատ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Նկարագրություն: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է՝ տերևակալված հաստ ցողունով 60–80 սմ բարձրության: Տերևները՝ բազմաթիվ, 1–2 մմ լայնության, ցողունը՝ խիտ ծածկող մինչև ծաղկաբույլ, լայն թաղանթային եզրով, ցողունագիրկ: Ծաղկաբույլը՝ խիտ երկար ողկույզի տեսքով: Ծաղկակիցները՝ խոշոր, թաղանթային, արծաթավուն–սպիտակ, ձգված սրացած գագաթով, ծաղիկները՝ շրջապատող: Ծաղիկները՝ սպիտակ: Տարածում: Հայաստանում հանդիպում է Շիրակի (Զաջուրի լեռնաշղթա, Բագրավան) և Լոռու (Սպիտակի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ստեղծել նոր ԲՀՊՏ Շիրակի լեռնաշղթայի վրա:

13.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Բարդաձաղկավորներ	Վարդատերեփուկ մուշկային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանում, որտեղ աճում է թեև սահմանափակ տարածքում, սակայն շատ առատ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Միամյա բույս է՝ 20–70 սմ բարձրության, ուղիղ կանգնած, թույլ ճյուղավորված ցողուններով: Տերևները փոփոխական՝ ամբողջականից մինչև ատամնավոր կամ փետրաձև բաժանված կամ փետրաձև հատված: Եզրային ծաղիկները՝ ձագարաձև, վարդագույն կամ ծիրանագույն, վարդագույն, երկար, կենտրոնական՝ խողավակավոր, սպիտակ, կարճ: Տարածում: Հայտնի է Երևանի ֆլորիստիկական շրջանից (Երևանի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
14.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր› Բարդաձաղկավորներ	Կանգար վարդագույն
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ 15–60 սմ բարձրության, կաթնափայլով: Տերևները՝ խոշոր, կաշենման, փշոտ, փետրաձև հատված: Զամբյուղները՝ 4–8 (10) ծաղիկներով, հավաքված մեծ երկարավուն–էլիպսաձև կամ գնդաձև գլխիկներում՝ շրջապատված կոշտ փշոտ ծաղկակից տերևներով: Ծաղիկները՝ երկսեռ, ծիրանագույն կամ դարչնագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Ջրվեժից մինչև Գեղարդ և Լանջազատ): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ և «Էրեբունի» պետական արգելոցի սահմանների ընդլայնում:

15.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Ծովրենազգիներ	Առյուծաթաթ հայկական
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Ներկայումս հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ պալարանման փքված ստորերկրյա մասով և եռմասնյա տերևներով: Թխակապույտ բույս՝ 10–25 սմ բարձրության: Ծաղիկները դեղին, հավաքված ողկույզում: Պտուղը՝ օվալ տուփիկ: Տարածում: Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատյան հարթավայր, Երասխի լեռնաշղթա, Ուրծի լեռնաշղթայի ստորոտ): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու և նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
16.	Բարձրակարգ բույսեր› Ծածկասերմեր› Գողտրիկազգիներ	Նոնեա բազմագույն
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Տեսակը նկարագրվել է 2001 թ–ին Արևմտյան Հայաստանից և հայտնաբերվել Հայաստանում 2002 թ.: Նկարագրություն: Երկամյա կամ բազմամյա բույս՝ մինչև 35 սմ բարձրության, կոշտ թավոտությամբ: Ցողունները՝ բազմաթիվ փռված կամ բարձրացող: Ծաղկեբույլը՝ պտղի ժամանակ երկարացող: Տերևները՝ կանաչավուն, նստադիր, նշտաբաձև, սուր: Բաժակը՝ 5 մմ երկարության: Ծաղիկները՝ բազմաթիվ, ներսից դեղնավուն դեպի վերև՝ վարդագույն–կապույտի փոխվող: Պտուղները՝ մանր, երիկամաձև: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Խոր Վիրապ, Արարատ, Վեդի, Երասխի լեռնաշղթայի կիրճ): Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

17.	Բարձրակարգ Ծածկասերմեր Խաչածաղկավորներ	բույսեր»	Ճարտարունկ արարատի
			Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Կովկասում հայտնի է միայն Հայաստանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ: Նկարագրություն: Բազմամյա խիտ ճիմեր առաջացնող բույս է: Տերևները՝ ամբողջական, արմատամերձ վարդակով, խիտ ծածկված երկար պարզ և կարճ եղանաձև մազիկներով: Ծաղիկները դեղին: Տարածում: Հայաստանում հանդիպում է Արագածի (Արագած լեռնագագաթ) և Գեղամի (Գեղամա լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Գեղամա լեռնաշղթայի աճելավայրերի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի բուֆերային գոտու սահմանային հատվածում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
18.	Բարձրակարգ բույսեր » Ծածկասերմեր » Զանգակազգիներ		Զանգակ Մինաստերի
			Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Գտնվում է ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Կիսաթփիկ՝ բարձիկանման ճիմ առաջացնող բույսեր: Ցողունները՝ վեր բարձրացող, 4–16 սմ երկարության: Վարդակային տերևները՝ թիանման, սեպաձև ձգված կոթունի: Ծաղիկները 1–4, վառանկանման ծաղկաբույլերում, կապտամանուշակագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Տիգրանաշեն և Զանգակատուն գյուղերի միջև, Խաչիկ, Գնիշիկ, Գանձակ, Խնձորուտ): Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

19.	Բարձրակարգ բույսեր՝ Ծածկասերմեր > Մեխակազգիներ	Մապնարմատ արեցանման
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Հիմնական սպառնալիքը՝ աճելավայրերի խախտում ճանապարհային ցանցի զարգացման հետևանքով: Նկարագրություն: Բույսեր՝ մինչև 2 մ տրամագծով խիտ բարձիկներ առաջացնող: Տերևները՝ լայնակի կտրվածքում եռանկյուն, 1–4 մմ երկարության, 1 մմ լայնության, կոմինդրաձև միմյանց վրա դասավորված: Տարածում: Հայաստանում հանդիպում է Երևանի (Ուրծի լեռնաշղթա, Տիգրանաշեն, Էլփին գյուղերի շրջակայք) և Զանգեզուրի (Որոտան գետի կիրճ) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
20.	Բարձրակարգ բույսեր > Ծածկասերմեր > Թելուկազգիներ	Բիեներցիա շուրձաթև
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Տարածման և բնակության շրջանները կրճատվել են Արարատյան հարթավայրում աղակալված տարածքների յուրացման հետևանքով: Նկարագրություն: Միամյա, սուկուլենտ, մերկ, բաց–կանաչ բույս 15–40 սմ բարձրության: Տերևները՝ գլանաձև, բուր, աղեղնաձև կորացած, հիմքով ցողունի հետ սերտաձած: Ծաղիկները՝ երկսեռ և վարսանդավոր: Տարածում: Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ, Երասխ, Մասիս, Երասխահուն): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Որդան կարմիր» արգելավայրում և գյուղատնտեսության նախարարության հողագիտության ինստիտուտի ստացիոնարի տարածքում:

21.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Շնդեղազգիներ	Շնդեղ ստվերային
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է: Նկարագրություն: Բազմամյա անցողուն պալարասոխուկավոր բույս է: Պալարասոխուկը՝ ծածկված սևավուն–գորշկաշենման թեփերով: Տերևները՝ 2–5, պտղի ժամանակ շատ մեծ ացող, գոտիանման, հաստավուն, վերևում և ներքևում նեղացող: Ծաղիկները՝ 1–3, ծիրանագույն դժգույն վարդագույն: Տարածում: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Թումանյանի շրջակայք): АОО 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 25 կմ է: Հայաստանից բացի աճում է Արևմտյան Նախակովկասում, Մեծ Կովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Ռումինիայում, Սև ծովի առափնյա շրջաններում, Դրիմում և Հյուսիսային Անատոլիայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում:
22.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Տիպիլազգիներ	Արջատիլենի
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Բարեկազմ, ուղիղ բնով, խիտ սաղարթով, հսկա ծառեր՝ 25–30 մ բարձրության: Կեղևը՝ մուգ մոխրագույն, խոր–ճեղքավորված: Տերևները՝ խոշոր, թույլ սրտաձև, կրկնակի ատամնավոր, վերինները՝ բլթակավոր ատամնավոր: Պտուղները՝ հավաքված 3–20–ական: Պտղագավաթը՝ կազմված հատված, պտուղները գերա անցող, նեղ, կորացած, նշտարաձև մասերից: Ընկույզը փոքր, գնդաձև կամ հակաձվաձև, կողքերից սեղմված, կճեպը՝ հաստ: Տարածում: Աճում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Սևքար գետի վերնագավառ, Գետահովիտ, Ենոքավան, Ոսկեպար): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արջատիլենու» արգելավայրում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

23.	Բարձրակարգ Ծածկասերմեր՝ Թանձրատերևազգիներ	բույսեր՝	Վարդակուկ ոսկեգոծ
			Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա 500 քառ. կմ-ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Նկարագրություն: Բազմամյա բույս՝ 6–13 սմ բարձրության: Վարդակի տերևները՝ երկարավուն-թիաձև, մերկ, վերևում՝ բթավուն, հիմքում՝ սեպաձև, մինչև 2 սմ երկարության, ցողունայինները՝ ավելի փոքր, նշտարաձև, գեղձերով պատված: Ծաղկակիր ցողունները՝ 5–6 սմ բարձրության: Ծաղկաբույլը՝ նոսր ծաղիկներով: Ծաղիկները ոսկեդեղին, կարճ, 2 մմ երկարության կոթերով: Տարածում: Աճում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայք): Հայաստանից բացի, աճում է Փոքր Ասիայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
24.	Բարձրակարգ բույսեր ՝ Ծածկասերմեր ՝ Դդմազգիներ		Զմերուկ վայրի
			Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հավաքվել է մեկ անգամ 1977 թ.: Հիմնական սպառնալիքն է տարածման և բնակության շրջանների փոքր մակերեսը (10 քառ. կմ-ից պակաս): Նկարագրություն: Միամյա բույս՝ փոված կամ մազլցող 1–2 մ երկարության ընձյուղներով: Տերևները՝ խոր դուբորդ, հիմքում՝ սրտաձև, խոր-եռբաժան, 1–2 փետրաձև բաժանված մասերով: Պսակը արտաքինից կանաչ, խավոտ: Պտուղը՝ 7–12 սմ տրամագծով, բաց կանաչ, բազմասերմ, պտղամիսը՝ չորոտ: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու (Արաքս գետի ողողադաշտ Մեղրի քաղաքի մոտ) ֆլորիստիկական շրջանում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու և նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:

25.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Բողխազգիներ	Բոշխ կախված
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա, փուխր ճիւղ առաջացնող խոտաբույս՝ 80–120 սմ բարձրության: Տերևները՝ գծային, 1–1,6 սմ լայնության: Ծաղկաբույլերում վարսանդավոր հասկիկները՝ 10–17 սմ երկարության, աղեղնաձև թեքված: Ծածկող թեփերը՝ ձվաձև, պարկիկներին հավասար կամ մի փոքր կարճ, 1 մմ երկարության սրածայրով: Տարածում: Հանդիպում է Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ Սրաշեն, Շիկահող (կենու պուրակ) և Ներքին Հանդ (սոսու պուրակ) գյուղերի շրջակայքում: Ընդհանուր արեալը ընդգրկում է Կովկասը, Արևմտյան և Միջին Եվրոպան, միջերկրածովյան ավազանը, Անատոլիան, Իրաքը, Իրանը և Հյուսիսային Աֆրիկան: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիան պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
26.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Հավամրգազգիներ	Հապալասենի ճահճային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հանրապետությունում ստույգ հայտնի են երկու պոպուլյացիաներ, որոնց տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Երկու լոկալիտետների միջև տարածությունը 160 կմ է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում գլխավորապես կլիմայի փոփոխության հետ կապված աճելավայրերի կորուստի պատճառով: Նկարագրություն: Տերևաթափ գետնատարած փուլած թուփ՝ 30–60 սմ բարձրության: Տերևները՝ բաց կապտավուն կանաչ, մանր, մոտ 1 սմ երկարության: Ծաղիկները՝ համարյա նստադիր, 1–4-ական տերևների անութներում: Հատապտուղը կապույտ, հյութալի: Տարածում: Հայաստանում հանդիպում է Գեղամի (Գոիձոր) և Վերին– Ախուրյանի (լեռ Ղուկասյան Մեծ) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

27.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Լոբազգիներ	Տափուլոտ անտառային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ թույլ, լայն-թևավոր ցողուններով, 50–200 սմ երկարության: Տերևները՝ 1 զույգ, ռոմբաձև-էլիպսաձև կամ լայն-նշտաբաձև, 6–14 սմ երկարության, 1–4,5 սմ լայնության: Ծաղկակիրները՝ տերևներից երկար 3–10 ծաղիկներով: Պսակը՝ բազմերանգ, դրոշմ 13–17 մմ երկարության: Ունդերը՝ գծային, 5–8 սմ երկարության: Մերմերը՝ ցանցաթմբիկավոր: Տարածում: Հայտնի է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, «Շիկահող» պետական արգելոցում: Հայաստանից բացի, աճում է Կովկասի այլ շրջաններում, Եվրոպայում, Հյուսիսային Անատոլիայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:
28.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Հաճարազգիներ	Շագանակենի ցանովի
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Ներկայումս բնության մեջ հայտնի են երկու բնական պոպուլյացիաներ (սովետական տարիներին շատ շրջաններում այս տեսակն օգտագործվել է անտառատնկման ժամանակ): Բնակության շրջանը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Նկարագրություն: Ծառ՝ մինչև 35 մ բարձրությամբ: Տերևները՝ մեծ, ամբողջական, երկարավուն-նշտաբաձև, ատամնաեզր, գազաթում՝ սրացած: Պտուղը՝ կաշենման պտղապատով, ընդգրկված սուր-փշոտ, փայտացած պտղազավաթի մեջ: Տարածում: Հայաստանում հանդիպում է Իջևանի (Իջևանի շրջակայք) և Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Մեկ պոպուլյացիան պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում:

29.	Բարձրակարգ բույսեր՝ Ծածկասերմեր՝ Ֆրակենիազգիներ	Ֆրանկենիա փոշեպատ
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Միամյա բույս՝ 4–40 սմ բարձրության, չռված ճյուղավորությամբ: Տերևները՝ հակաձվաձև, տակից ծածկված սպիտակ ալյուրանման մազիկներով: Ծաղիկները՝ ծայրային վահանիկանման դիսպոզիաներով: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիան աճում է Արարատի ճահիճներում, որը, ՀՀ Կառավարության 2008 թ. որոշմամբ, ընդգրկված է բնության հուշարձանների ցանկում՝ որպես «Աղակալած ճահճուտ»:
30.	Բարձրակարգ բույսեր ՝ Ծածկասերմեր ՝ Բոգազգիներ	Բոգ Օլիվեի
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Ներկայումս հայտնի է երեք պոպուլյացիա: Արեալը խիստ ֆրագմենտացված է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ 20–70 սմ բարձրության: Արմատամերձ տերևները՝ մինչև 10 սմ երկարության, առաջացնում են վարդակ, ցողունային տերևները՝ սակավաթիվ (2–3 զույգ) նեղ նշտարաձև: Ծաղիկները՝ բազմաթիվ, գազաթնային կոմպակտ ծաղկաբույլերում, մեծ, կապույտ կամ մանուշակագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է Երևանի (Երևանի շրջակայք, Ուրծի և Երախի լեռնաշղթաներ) և Շիրակի (Լուսադրյուր գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

31.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Խորդենազգիներ	Ճայկտուց Մոսնովսկու
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս է: Ցողունները՝ 5–10 սմ երկարության, գեղձային թավոտությամբ: Տերևները փետրաձև հատված, կոթունավոր, մասերը՝ բազմաթիվ, գծային կամ սեպաձև: Տարածում: Հայաստանում հանդիպում է Արագածի (լեռնագագաթ՝ Արագած) և Գեղամի (Ակնա լճի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
32.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Կոկոռազգիներ	Հաղարջենի հայկական
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Հայտնի է երկու պոպուլյացիա, որոնց միջև տարածությունը 200 կմ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Թուփ՝ հաճախ ավելի քան 1 մ բարձրության: Տերևները՝ ավելի քան 5 սմ երկարության, պատած բազմաթիվ դեղին գեղձերով: Ծաղիկները՝ բաց մանուշակագույն կամ վարդամոխրագույն պսակաթերթերով, 4–9–ական խմբված մինչև 5–6 սմ երկարության ողկույզներում: Պտուղները՝ սև, մերկ, երկար կոթուններով: Տարածում: Հանդիպում է միայն Վերին Ախուրյանի (Ամասիայի շրջակայք) և Դարեղե իսի (Ջերմուկ) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

33.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր› Մրոհունդազգիներ	Մրոհունդ գեղատես
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: Նկարագրություն: Բազմամյա, ցածրահասակ բույս՝ 5–7 (15) սմ բարձրության: Ցողունները՝ բազմաթիվ, բարակ, համարյա թելանման, փոված: Տերևները՝ ձվաձև կամ երկարավուն, մինչև 1 սմ երկարության, ամբողջաեզր, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները՝ սակավաթիվ, 1–3–ական ճյուղերի զազաթներին: Տարածում: Հանդիպում է Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում (Արենի, Արփա, Նորավանքի կիրճ, Խաչիկ գյուղի մոտ): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Արենի գյուղի մոտ գտնվող ժայռոտ տեղամասը վերցնել հատուկ պահպանության տակ՝ բնության հուշարձանի կարգավիճակով և իրականացնել մոնիթորինգ:
34.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Հիբիկազգիներ	Հիբիկ գայլականջ
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Կոճղարմատավոր բույս է: Ցողունը՝ 10–35 սմ բարձրության: Տերևները՝ ցողունագիրկ, մանգաղաձև կորացած: Ծաղիկները՝ մեծ; ծաղկապատի արտաքին և ներքին մասերը՝ դարչնագույն ծիրանագույն; արտաքինները՝ 4,5–6 սմ լայնության, կենտրոնում մեծ թավշյաս պուտով; ներքինները՝ 5–8 սմ տրամագծով: Տարածում: Հայաստանում տարածված է Երևանի (Երանոսի և Ուրծի լեռնաշղթաներ, Տիգրանաշեն և Էլփին գյուղերի միջև) և Դարեղեգիսի (Արփա և Մարտիրոս գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

35.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Կնյունագգիներ	Կնյուն սուր
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տեսակի տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Նկարագրություն: Ճիմաթմբեր առաջացնող բույսեր են: Յողունը՝ (30) 50–80 (120) սմ բարձրության: Տերևները՝ արմատամերձ, լավ զարգացած տերևաթիթեղներով՝ 1–2 մմ տրամագծով, զլանաձև, ամուր, սրածայրով վերջացող, ներսում համատարած սպուգային հյուսվածքով, հիմքի մոտ կարմրավուն շագանակագույն տերևապատյաններով: Ծաղկաբույլը՝ 4–6 (10) ճյուղերով, նստադիր կամ 4–5 սմ երկարության ծաղկակիրներով: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատ, Յուվա, Շահումյան, Երախի լեռնաշղթա): Պահպանության միջոցառումներ: 2008 թ. Արարատ քաղաքի մոտ հատուկ առանձնացվել է «Աղակալված ճահճուտ» բնության հուշարձանը, սակայն ներկայումս պահպանումը չի իրականացվում:
36.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Շրթնագգիներ	Վիշապագլուխ ողկույզային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Բազմամյա բույս՝ 5–15 սմ բարձրության, ստորին մասում փայտացած ցողուններով: Տերևները՝ փետրաձև բաժանված: Ծաղկաբույլը՝ խիտ, համարյա գլխիկանման: Բաժակը՝ երկշորթ, վերին շորթի միջին բլթակը՝ 2–3 անգամ եզրային նշտարաձև բլթակներից լայն: Պսակը՝ բաց մանուշակագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է Արագածի (Գեղարոտի կիրճ) և Զանգեզուրի (Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաների՝ Կապուտջուղ, Գազանալեռ, Արամազդ լեռնագագաթներ, գյուղ՝ Արավուս) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, ex-situ պահպանություն:

37.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Շուշանազգիներ	Վարդակակաչ Մոսնովսկու
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Բազմամյա սոխուկավոր բույս՝ 25–50 սմ բարձրության: Տերևները՝ երկարավուն նշտարաձև, վերևում և ներքևում նեղացող, միշտ կորացած: Ծաղիկը՝ շատ մեծ 8–10 սմ տրամագծով միայնակ, գավաթանման, մուգ կարմիր: Տարածում: Հայաստանում հանդիպում է Զանգեզուրի (Քաջարան, Լեռնաձոր, Փխրուտ, Տաթև, Շիկահող, Կապան) և Մեղրու (Լեռնագագաթ՝ Բերդաքար, Արծվաբերդ, Լիճք,) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Մեկ պոպուլյացիա պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
38.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Փիփերթազգիներ	Մոլոշիկ Ժերարի
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Նկարագրություն: Բազմամյա բույս՝ 10–50 սմ բարձրության, թավշյա թավոտությամբ, խիտ տերևակալված, փոված կամ բարձրացող ցողուններով: Տերևները՝ սրտաձև երիկամաձև, աղեղնաեզր: Ծաղիկները՝ անուրթային, բարակ երկար կոթերով, պսակաթերթերը՝ մուգ վարդագույն: Տարածում: Հանդիպում է Երևանի (Վարդաշեն, Էրեբունի) և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

39.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Զրաերեքնուկազգիներ	Զրաերեքնուկ եռատերև
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս: Ունի հազվագյուտ տեսակի կարգավիճակ: Նկարագրություն: Բազմամյա սողացող կոճղարմատով ջրային բույս է: Ցողունը՝ 30–60 սմ երկարության: Տերևները՝ հերթադիր, մինչև 30 սմ երկարության կոթերով; տերևիկները՝ 3, հակաձվաձև կամ էլիպսաձև, 5–8 սմ երկարության: Ծաղիկները՝ 10–20, խիտ գագաթնային ողկույզներում: Տարածում: Հանդիպում է Սևանի (Գիլի լիճ), Դարեղեգիսի (Զիմոյի և Փիրոսի լճեր), Զանգեզուրի (Վերդոյի լիճ) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ, ex-situ պահպանություն, ներդնել ջրավազանների կանաչապատման համար:
40.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Ապուզանազգիներ	Նեղտերևի Դողունի
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա 10 քառ. կմ–ից պակաս տարածման և բնակության շրջանների մակերեսով: Նկարագրություն: Բազմամյա բույս՝ մինչև 60 սմ բարձրությամբ: Տերևները՝ գծային նշտարաձև, մերկ կամ տակից առսեղմ թավոտ: Պսակաթերթերը՝ վարդագույն: Առէջները՝ 8, որոնցից 4 ավելի կարճ, դասավորված մեկ շարքով: Սոնակը՝ թեթևակի առէջներից երկար: Տարածում: Հայաստանում հանդիպում է Լոռու ֆլորիստիկական շրջանում (Ստեփանավան, Տաշիր): Հայաստանից բացի, աճում է Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Միջին և Հարավային Եվրոպայում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական աշխատանքներ՝ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու և նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

41.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Ճրագախոտազգիներ	Դևազի աղուտային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ միայնակ հաստ ցողուններով մինչև 40–50 սմ բարձրության: Ծաղկաբույլը՝ խիտ, հաստ մինչև 20 սմ երկարության և 4–5 սմ լայնության: Պսակը՝ դժգույն բաց երկնագույն, թեթևակի զիգոմորֆ: Բաժակը՝ ձուլաթերթ, միանման մասերով, բաժակաթերթերը՝ եզրերից բրդոտ-մազոտ: Տարածում: Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Երասխի և Խոր Վիրապի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով և իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
42.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Քաջվարդազգիներ	Քաջվարդ նեղատերև
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ ոչ մեծ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ կոնաձև հաստացած արմատներով: Ցողունը՝ մինչև 60 (90) սմ բարձրության: Տերևները՝ կրկնակի փետրաձև, նեղ գծային, մինչև 2 մմ լայնության մասերով: Վերին տերևները շրջապատում են ծաղիկը: Ծաղիկները մուգ կարմիր պսակաթերթերով: Առէջները՝ դեղին: Տարածում: Հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում (Կապանի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պահպանության համար միջոցառումներ չեն իրականացվում:

43.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Սոսագգիներ	Սոսի արևելյան
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Ներկայումս հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա՝ Կովկասում ամենամեծ պուրակը: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված աճման վայրերի պայմանների փոփոխության հետ: Նկարագրություն: Մուգ մոխրագույն բնով սլացիկ ծառ՝ մինչև 30 մ բարձրությամբ: Տերևները՝ խոշոր, խորը մատնաձև հնգաբաժան: Ծաղկաբույլը՝ գնդաձև, 2–2,5 սմ տրամագծով, կախված երկար կոթունով: Պտղիկները՝ վերևում սուր: Գեղազարդային ծառ է: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Ծավ գետի ողողատում և առանձին ծառեր մոտակա անտառներում: Պահպանության միջոցառումներ: Պահպանվում է «Սոսու պուրակ» արգելավայրում, «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
44.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Արճախոտագգիներ	Ոգնաթուփ ֆյոդորովի
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ փոքրիկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճման պայմանների փոփոխության և ներքին գործոնների պատճառով: Նկարագրություն: Բարձիկանման կիսազնդաձև թփիկ է: Ծաղկակիրները՝ տերևներին չգերազանցող: Հասկիկները՝ բազմաթիվ, շատ մանր, 6–7 մմ երկարության, երկշաք, համարյա կոմիներաձև միմյանց ծածկող: Պսակաթերթերը՝ սպիտակ կամ դժգույն վարդագույն: Տարածում: Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Ագարակի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

45.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Հացազգիներ	Շյուղախոտ անտառային
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Հայտնի են 4 պոպուլյացիաներ Հայաստանի հյուսիսում և հարավում: Տարածման շրջանի մակերեսը՝ 20000 քառ. կմ–ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված անտառտնտեսական գործունեության պատճառով առաջացող աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ երկար սողացող կոճղարմատով: Ցողունները՝ ուղիղ կանգնած 50–150 սմ բարձրության: Տերևապատյանները՝ առանց ականջուկների, թիթեղները՝ հարթ, 5–15 մմ լայնության: Ծաղկաբույլը՝ փոված հուրան: Ստորին ծաղկային թեփերը՝ վերին մասում ողնուցավոր, անքիստ: Տարածում: Հայաստանում հանդիպում է Իջևանի (Նոյեմբերյան, Շամշադին, Մարգահովիտ) և Զանգեզուրի («Շիկահող» պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Մեկ պոպուլյացիա պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
46.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Մատիտեղազգիներ	Խանձիկ հաղարջի
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայաստանում գտնվում է ընդհանուր արեալի հյուսիսային սահմանում: Հայտնի են 2 պոպուլյացիաներ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում ներքին գործոնների և աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս է: Ցողունները՝ առանց տերևների, հաստ, 50–100 սմ բարձրության: Արմատամերձ տերևները՝ կոթունավոր, կաշենման, սրտաձև կլոր կամ կլորավուն, մինչև 50 սմ տրամագծով: Ծաղկաբույլը՝ կիսագնդաձև բազմածաղիկ հուրան: Ծաղկապատի թերթերը՝ 6, պսակաթերթանման: Տարածում: Հայաստանում աճում է Շիրակի (Արագած գյուղի շրջակայք) և Երևանի (Սուրենավան գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում:

47.	Բարձրակարգ բույսեր՝ Ծածկասերմեր՝ Շերեփուկախոտազգիներ	Գրենլանդիա խիտ
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Նկարագրություն: Բազմամյա ջրային բույս՝ մինչև 40 սմ երկարությամբ, ճյուղավորված ցողուններով և սողացող արմատներով: Տերևները՝ թափանցիկ, մանր, 1–2,5 սմ երկարության, 0,3–0,8 (1,5) սմ լայնության, եռաջիղ, հարթ կամ թույլ ալիքավոր եզրերով: Ծաղկաբույլը՝ հասկանման, 1,5–5 սմ երկարության, մանրածաղիկ, 0,5–1 (1,5) սմ երկարության կոթունի վրա: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Սևանի ֆլորիստիկական շրջանում՝ Սևանա լճի ավազանում (Սևան և Լիճք լճեր, Արգիճի գետի ավազան, Ծովակ): Պահպանության միջոցառումներ: Տեսակի աճելավայրերը պահպանվում են «Սևան» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:
48.	Բարձրակարգ բույսեր՝ Ծածկասերմեր՝ Գնարբուկազգիներ	Գնարբուկ Կոմարովի
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ 6–10 սմ բարձրության: Ծաղկալաքը զարգացած չէ: Ծաղիկները՝ միայնակ, սպիտակ, 3–4 սմ տրամագծով: Բաժակը՝ պսակի խողովակին հավասար: Գեղազարդային տեսակ է: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում («Շիկահող» պետական արգելոց, Ճակատեն գյուղի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ներդնել ծաղկաբուծության բնագավառում:

49.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Գորտնուկազգիներ	Վարդակակաչ գորտնուկային
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Հայտնի է Հյուսիսային Հայաստանում՝ 3 պոպուլյացիաներում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ անտառների հատումների և ներքին գործոնների պատճառով: Նկարագրություն: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս՝ 10–20 սմ բարձրության: Ծաղիկների տակ գտնվող ծածկոցը կազմված է մատնաձև հատված ցողունային տերևներից (նման են արմատամերձ տերևներին): Ծաղիկները՝ դեղին: Գեղազարդային բույս է: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Բջևանի ֆլորիստիկական շրջանում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում:
50.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Վարդազգիներ	Արոսենի հայաստանյան
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Ռելիկտային տեսակ է, որի արեալը Հայաստանում աստիճանաբար կրճատվում է միջավայրի որակի վատացման և աճելավայրերի յուրացման հետևանքով: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Մեծ թուփ է: Տերևները՝ էլիպսաձև, կաշենման, ամբողջական, հիմքի մոտ և գագաթին սեպաձև նեղացած, խոշոր ատամեղրերով, մերկ, փայլուն, ներքևից խիտ առսեղմ ձյունափայլ թավոտությամբ: Պտուղը՝ մուգ կարմիր ծածկված բազմաթիվ բաց գույնի ոսպիկներով: Տարածում: Հանդիպում է Սևանի (Սևանա լճի ավազան), Ապարանի (Արայի լեռ) և Գեղամի (Գեղարդ) ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

51.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Տորոնազգիներ	Ժոբերգիա Սովիչի
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Հայտնի են 3 պոպուլյացիաներ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Կիսաթուփ՝ մինչև 40 սմ բարձրությամբ, կոտրատվող, ստորին մասում՝ սպիտակավուն ցողուններով: Տերևները՝ հակադիր, գծային, հիմքի մասում՝ տերևապատյանով: Ծաղիկները՝ խմբված կիսահովանոցներում, տերևների անոթներում և ճյուղերի գագաթներին: Պսակը՝ երկար խողովակով և 4–5–բաժան ետծալով, վարդագույն: Տարածում: Հայաստանում հանդիպում է Երևանի (լեռնագագաթ՝ Երանոս, Երախի լեռնաշղթա, Զովաշեն գյուղի շրջակայք), Դարեղեգիսի (Զիվա գյուղի շրջակայք) և Մեղրիում (Մեղրի քաղաքի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:
52.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Սանտալագիներ	Թեզիում փոված
		Կատեգորիա: Վտանգված տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Հանրապետությունում հայտնի է մեկ պոպուլյացիա: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ փոված ճյուղավորված ցողուններով, առանց թխակապույտ փառի: Տերևները՝ բարակ, գծային: Ծաղկաբույլը՝ պարզ ողկույզ, բարակ եզրային ճյուղիկներով: Ծաղիկները՝ մանր, համարյա նստադիր: Ծաղկապատը՝ սպիտակավուն, լայն բաժականման: Տարածում: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Սևանի լեռնանցք և Մարգահովիտ գյուղի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի պահպանման գոտում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

53.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Խլածաղկազգիներ	Խոնդատ երևանյան
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Մոնոկարպիկ բույս է: Ցողունները՝ 30–60 սմ բարձրության, ստորին մասում՝ մոխրագույն թաղիքե թավոտությամբ: Արմատամերձ տերևները՝ կոթուններով, տերևաթիթեղը՝ երկարավուն կամ երկարավուն ձվաձև, ցողունային տերևները՝ նստադիր: Պսակը՝ գոգավոր, դեղին: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Մեղրու ֆլորիստիկական շրջանում, Ագարակ ավանի շրջակայքում: АОО 4 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի, աճում է Նախիջևանում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ստեղծել նոր ԲՀՊՏ Ագարակ ավանի շրջակայքում:
54.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Մորմազգիներ	Շիկատակ, մահամորմ, լուսնի ծաղիկ
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ–ից պակաս: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: Նկարագրություն: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս՝ մինչև 2 մ բարձրությամբ: Ցողունները՝ թխակապույտ, մերկ: Տերևները՝ ձվաձև խոշոր, մինչև 20 սմ երկարության և մինչև 12 սմ լայնության: Ծաղիկները՝ մանուշակագույն գորշավուն: Պտուղը՝ սև, փայլուն, բազմաթիվ սերմերով: Թունավոր բույս է: Տարածում: Հայտնի է Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Պահպանության միջոցառումներ: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում:

55.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Կոռնազգիներ	Կոռն փետրավոր, Ջոնջոլ
		Կատեգորիա: Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Նկարագրություն: Թուփ կամ փոքր ծառ՝ 2–6 մ բարձրության, եղանաձև դեղնագորշավուն ճյուղերով, կանաչ միամյա ընձյուղներով: Տերևները՝ երկարակոթ, կենտ փետրաձև, կազմված 5–7 լայն նշտարաձև կամ էլիպսաձև, մերկ, ատամնաեզր, վերնից մուգ կանաչ, ներքևի կողմից՝ բաց գույնի տերևիկներից: Ծաղկաբույլը՝ երկար, կախված, բարդ ողկույզ: Ծաղիկները՝ սպիտակ: Պտուղը՝ փքված տուփիկ, զագաթներով հանդիպող փեղկերով: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևան, Բարեկամավան, Սևքար, Բագրատաշեն, Շամշադին): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:
56.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Գռմակազգիներ	Ստելերոպսիս Մագաքյանի
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հարավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Նկարագրություն: Կիսաթփիկ՝ բազմաթիվ ուղիղ կանգնած չճյուղավորված, հիմքի մասում՝ փայտացող ցողուններով, 10–15 սմ բարձրության բույս: Տերևները՝ մանր, 8–12 մմ երկարության, էլիպսաձև, մերկ, թխակապույտ: Ծաղիկները՝ մանր, արտաքինից կարմրավուն խողովակով՝ հավաքված ծաղկաբույլերում: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում, Խաչիկ և Գնիշիկ գյուղերի շրջակայքում: Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել որոնողական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու նպատակով:

57.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Կատվախոտազգիներ	Խթանաբույս երկարածաղիկ
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 (անհետացած) կարգավիճակով, քանի որ 1940 թ. հետո հանրապետությունում չի հավաքվել: Մակայն պոպուլյացիան գոյություն ունի Նախիջևանում՝ Հայաստանի սահմանի մոտ: Նկարագրություն: Բազմամյա թխակապույտ խոտաբույս՝ մինչև 1 մ բարձրությամբ, բազմաթիվ ուղղաձիգ կանգնած ցողուններով: Տերևները՝ ամբողջական, նշտարաձև: Ծաղկաբույլը՝ 30–50 սմ երկարության, ընդհատումներով: Ծաղիկները՝ խոշոր, մինչև 3 սմ երկարության, ծիրանագույն կարմիր: Տարածում: Հայաստանում հանդիպում է միայն Դարեղեզիսի ֆլորիստիկական շրջանում (Խաչիկ գյուղի շրջակայք): Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է Խաչիկ գյուղի շրջակայքում ստեղծել նոր ԲՀՊՏ, իրականացնել հետազոտական աշխատանքներ պոպուլյացիայի ծավալը և կառուցվածքը ճշտելու և նոր աճելավայրեր հայտնաբերելու համար:
58.	Բարձրակարգ բույսեր › Ծածկասերմեր › Մանուշակազգիներ	Մանուշակ կովկասյան
		Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս՝ 5–10 սմ բարձրության: Տերևները՝ կլորավուն, հիմքում՝ խորը փորվածքով, կոթունավոր: Ծաղիկները՝ ցողունների վրա 1–2-ական, վառ դեղին: Տարածում: Հայաստանում հայտնի է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում, Խուստուփ լեռնագագաթում: Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ, ստեղծել նոր ԲՀՊՏ Խուստուփ լեռնագագաթի վրա:

Մսկեր

1. Ճանճասպան վառ դեղին 	Հոմանիշ՝ <i>Agaricus gemmatus</i> Fr. Կարգ՝ Agaricales Ընտանիք՝ Amanitaceae Կատեգորիա: Անհետացման եզրին գտնվող (NT – Near threatened): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 2,5–11 սմ տրամագծով, դեղին, կիտրոնագույն, մեջտեղում ավելի մուգ գունավորված՝ դեղնագորշավուն, մսալի, սկզբում փռված, կիսագնդաձև, հետագայում տափակ, ընդհանուր ծածկոցի մնացորդներով: Պտղամիսն ու թիթեղները սպիտակ են: Ոտիկը՝ 7–10 x 1–1,5 սմ, սպիտակ կամ սպիտակավուն, կենտրոնական, սպիտակավուն նեղ օղակով: Տարածվածությունը: Հայաստանում հայտնաբերված է միայն Զանգեզուրի ֆլոր. շրջ.՝ «Սոսու պուրակ» արգելավայր, Կապանի շրջակայք: Բնապահպանական միջոցառումներ: Պահպանվում է «Ծավ» արգելավայրի համապատասխան էկոհամակարգերի կազմում:
2. Ճանճասպան կարմիր 	Ճանճասպան կարմիր Հոմանիշ՝ <i>Agaricus muscarius</i> L. Կարգ՝ Agaricales Ընտանիք՝ Amanitaceae Կատեգորիա: Խոցելի (VU– Vulnerable): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 5–25 սմ տրամագծով, տարբերվում է վառ գունավորմամբ՝ նարնջակարմրից մինչև մուգ կարմիր, հաստ մսալի: Պտղամիսը սպիտակ է՝ հաճելի հոտով և քաղցրահամով: Թիթեղներն ազատ են, խիտ, լայն, սպիտակ, չորանալուց հետո՝ դեղնավուն: Ոտիկը՝ 7–20 x 1–3,5 սմ, սպիտակ կամ սպիտակավուն, կենտրոնական, սպիտակավուն կամ դեղնավուն օղակով: Տարածվածությունը: Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլոր. շրջ.՝ Դիլիջան քաղաք, Պարզ լճի շրջակայք, Ապարանի ֆլոր. շրջ.՝ Ծաղկաձոր, Հանքավան, Լոռու ֆլոր. շրջ.: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում:

3.	Աստերոֆորա անձրևային 	Հոմանիշ՝ <i>Nyctalis asterophora</i> Fr. Կարգ՝ Tricholomatales Ընտանիք՝ Tricholomataceae Կատեգորիա: Տվյալներն անբավարար են (DD – Data Deficient): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 0,5 x 2,5 սմ տրամագծով, սպիտակավուն, ծածկված ալյուրանման շերտով, սկզբում ուռուցիկ, ապա՝ գնդաձև: Թիթեղները սպիտակ են, հասունանալուց հետո մոխրագույն: Պտղամիսը մոխրագույն է, տհաճ հոտով: Ուտիկը՝ 1–4 x 0,2–0,5 սմ, սպիտակամոխրագույն, թավշյա: Տարածվածությունը: Հայաստանում հայտնի է Լոռու ֆլոր. շրջ.՝ Ստեփանավանի շրջակայք՝ անցած դարի 20–ական թվականներին: 2005 թ– ին հայտնաբերվել են սակավաթիվ պտղամարմիններ Իջևանի ֆլոր. շրջ.՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:
4.	Աստղիկ հիգրոմետրիկ 	Հոմանիշ՝ <i>Geastrum hygrometricum</i> Pers. Կարգ՝ Sclerodermatales Ընտանիք՝ Geastraceae Կատեգորիա: Խոցելի (VU– Vulnerable): Համառոտ նկարագրությունը: Պտղամարմինը՝ 2–4 սմ տրամագծով, աստղաձև, սկզբում կլորավուն, պատված բազմաշերտ թաղանթով: Էկզոպերի դիումը բաժանվում է 7–10 բլթակների, սպիտակ է, հաստ մսալի, ճաքճքվող: Էնդոպերի դիումը մոխրագույն է կամ շագանակագույն, կլորավուն, հարթ կամ ցանցաձև: Հասունանալուց հետո պտղամարմնի զագաթին բացվում է փոքր պատառոտված անցք: Տարածվածությունը: Հայաստանում հանդիպում է հունիս ամսին Երևանի ֆլոր. շրջ.՝ «Խոսրովի անտառ» արգելոցի տարածք: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համապատասխան էկոհամակարգերի կազմում:
5.	Ցիստոդերմա ամիանտային 	Հոմանիշ՝ <i>Lepiota amianthina</i> (Scop.:Fr.) P. Karst. Կարգ՝ Agaricales Ընտանիք՝ Agaricaceae Կատեգորիա: Խոցելի (VU– Vulnerable): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 2–5 սմ տրամագծով, դեղնավուն, դեղնաոսկեգույն կամ բաց շագանակագույն, սկզբում՝ կիսագնդաձև, հետո՝ փռված, մեջտեղում՝ լայն տափակ թմբիկով, չոր, մանր հատիկավոր, երբեմն ալյուրանման փառով ծածկված, եզրերին՝ մասնակի ծածկոցի մնացորդներով: Պտղամիսը սպիտակ է կամ սպիտակավուն, դեղնավուն երանգով, կտրվածքում՝ գույնը անփոփոխ է, ունի տհաճ հոտ և ալյուրի համ: Տարածվածությունը: Հայաստանում հանդիպում է Իջևանի ֆլոր. շրջ.՝ «Դիլիջան» ազգային պարկ, «Ախնաբատի կենի» արգելավայր: Բնապահպանական միջոցառումներ: Պահպանվում է «Ախնաբատի կենի» արգելավայրում:

6.	Մերիպիլուս հսկա 	Հոմանիշ՝ <i>Polypilus giganteus</i> (Pers.:Fr.) Donk Կարգ՝ Aphyllophorales Ընտանիք՝ Albatrellaceae Կատեգորիա: Վտանգված (EN – Endangered): Համառոտ նկարագրությունը: Պտղամարմինը՝ 0,5–0,8 մ տրամագծով, կլորավուն՝ կազմված բազմաթիվ ճյուղավորված, կարճ ոտիկների վրա նստած գլխարկներից, որոնք ամրացած են ուռուցիկ, պալարաձև հաստացած ընդհանուր ոտիկին: Գլխարկները կիսագնդաձև են, կղմինդրաձև դասավորված, մսալի, չորանալուց հետո՝ փայտացած, մակերեսը՝ գորշագույն կամ բաց շագանակագույն: Պտղամիսը կոշտ մսալի է, բաց գունավորմամբ, կտրելիս արագ մգանում է՝ ստանալով սև գույն, ունի յուրահատուկ սնկի հոտ: Տարածվածությունը: Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլոր. շրջ. «Դիլիջան» ազգային պարկ, Բերդ և Նոյեմբերյան քաղաքների շրջակայք: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:
7.	Միքիոստոմա ծակոտկեն 	Հոմանիշ՝ <i>Geastrum coliforme</i> With.: Pers. Կարգ՝ Lycoperdales Ընտանիք՝ Geastraceae Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող (CR – Critically Endangered): Համառոտ նկարագրությունը: Պտղամարմինը՝ 2–10 սմ տրամագծով, գորշավուն, երիտասարդ վիճակում՝ գնդաձև: Էկզոպերի դիումը հաստ է, թեփուկավոր, արագ պատռվում է՝ առաջացնելով 4–12 բլթակներ: Էնդոպերիդիումը գնդաձև է կամ վերևի մասում տափակ, մոխրաշագանակագույն կամ արծաթափայլ, նստած 3–5 մմ բարձրությամբ, գլանաձև, խրձերով դասավորված ոտիկների վրա: Էնդոպերիդիումի վերին մասում առաջանում են բազմաթիվ մանր, կլոր անցքեր: Գլեբան շագանակագույն է: Տարածվածությունը: Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հարավային Կովկաս: Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, Սևանի ֆլոր. շրջ. «Սևան» ազգային պարկ, Արտանիշ թերակղզում: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Սևան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում:
8.	Ֆիլոտոպսիս բնավորվող 	Հոմանիշ՝ <i>Crepidotus nidulans</i> (Fr.) Quel. Կարգ՝ Tricholomatales Ընտանիք՝ Pleurotaceae Կատեգորիա: Վտանգված (EN – Endangered): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 3–10 սմ տրամագծով, թաքմ վիճակում բոսորավարդագույն կամ նարնջադեղին, չորացած՝ դեղնաշագանակագույն, տափակ կամ ուռուցիկ, թավշյա: Պտղամիսը՝ թույլ վարդագույն, դեղնավուն, զաֆրանա դեղին, չորացած վիճակում՝ սպիտակ, տհաճ հոտով և համով: Թիթեղները՝ գլխարկի գույնից ավելի վառ: Ոտիկը բացակայում է: Տարածվածությունը: Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս (Վրաստան, Հայաստան): Հայաստանում հայտնաբերված է Իջևանի ֆլոր. շրջ. «Դիլիջան» ազգային պարկ: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

9.	Պոդաքսիս վարսանդային 	Հումանիշ՝ <i>Scleroderma pistillare</i> (L.) Pers. Կարգ՝ Podaxales Ընտանիք՝ Podaxaceae Կատեգորիա: Խոցելի (VU– Vulnerable): Համառոտ նկարագրությունը: Պոդաքսիսները՝ մինչև 25 սմ բարձրության: Պերիդիումը՝ 3–6 x 1–3 սմ, ձվաձև կամ էլիպսաձև: Էկզոպերիդիումը թեփուկավոր, հասունանալուց՝ սովորաբար թափվող: Էնդոպերիդիումը բարակ է, արտաքինից սպիտակ և կաշվե գույն, երբեմն ժանգագույն, սկզբում՝ հարթ, փայլուն կամ թելիկավոր, կնճռոտված, ապա՝ պատառոտված: Գլեբան երիտասարդ վիճակում սպիտակ է, հասունանալուց հետո՝ կարմրաշագանակագույն: Կապիլիցիումի հիֆերը ձիթապտղագույն են, կարմրագորշ կամ շագանակագույն, միջնապատերով, լավ զարգացած, թույլ ճյուղավորված: Տարածվածությունը: Հայաստանում տվյալ տեսակի եզակի օրինակները հայտնաբերված են միայն Երևանի ֆլոր. շրջ. «Խոսրովի անտառ» արգելոցի տարածք: Բնապահպանական միջոցառումներ: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում:
10.	Յուդասունկ մայրու 	Հումանիշ՝ <i>Ixocomus punctipes</i> (Peck) Singer Կարգ՝ Boletales Ընտանիք՝ Boletaceae Կատեգորիա: Կրիտիկական վիճակում գտնվող (CR – Critically Endangered): Համառոտ նկարագրությունը: Գլխարկը՝ 9–12 սմ տրամագծով, դեղնագորշավուն, լորձնային, բարձիկաձև, սկզբում՝ ուռուցիկ, հետո՝ տափակ, երիտասարդ պտղամարմինների մոտ ծավալված եզրերով, հասունանալուց հետո՝ եզրերը բլթակավոր: Պտղամիսը՝ դեղնաձիթապտղավարդագույն: Խողովակները՝ դեղնաձիթապտղագորշավուն, երիտասարդ պտղամարմինների մոտ՝ նեղ, հասունանալիս՝ մինչև 2 մմ լայնությամբ: Ոտիկը՝ 6–8 x 1–2,5 սմ, վերևում՝ դեղին, անգույն գորտնուկներով, հիմքային մասում՝ կեղտոտ վարդագույն թաղիքե միցելիումով: Տարածվածությունը: Հայաստանում հայտնաբերված է Երևանի ֆլոր. շրջ.՝ քաղաք Երևան, Նորքի անտառ: Բնապահպանական միջոցառումներ: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ապրելավայրերի հայտնաբերման ուղղությամբ:
11.	Գետնասունկ ամառային, ուտելի 	Կարգ՝ Tuberales Ընտանիք՝ Tuberaceae Կատեգորիա: Տվյալներն անբավարար են (DD – Data Deficient): Համառոտ նկարագրությունը: Պտղամարմինները՝ 2,5–10 սմ տրամագծով, շագանակագույն, ձիթապտղագույն, սև, գնդաձև կամ պալարաձև, մսալի, պատված խոշոր բողբոջ թեփուկներով՝ 2–10 մմ տրամագծով: Պտղամիսը՝ սպիտակ, դեղնավուն կամ մոխրագույն, սպիտակավուն, ոլորուն, մարմարանման երակագծերով, սնկի թույլ, հաճելի հոտով: Սպորափոշին մուգ շագանակագույն է: Պայուսակները պարունակում են 2–8 սպոր, գտնվում են պտղամարմնի ներսում, էլիպսաձև: Տարածվածությունը: Հայաստանում գտնվել է միայն մեկ անգամ եզակի առանձնյակներով Իջևանի ֆլոր. շրջ.՝ «Դիլիջան» ազգային պարկ, Դիլիջան քաղաքի շրջակայք: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան էկոհամակարգերի կազմում:

12.	Բոլետոպսիս սև-սպիտակ 	Հումանիշ՝ <i>Boletopsis subsquamosa</i> (L.:Fr.)Kotl. et Pouz. Կարգ՝ Aphyllophorales Ընտանիք՝ Boletopsidaceae Կատեգորիա: Վտանգված (EN – Endangered): Համառոտ նկարագրությունը: Պտղամարմինները միամյա են՝ կենտրոնական կամ կողքային գլխարկով: Գլխարկը՝ 5–12 սմ տրամագծով՝ մոխրագույն, գորշավուն, կլորավուն, տափակ կամ ուռուցիկ, սուր հաստ եզրերով, մակերեսը պատված է բարակ թաղանթով, հասունանալուց հետո ճաքճքում է՝ առաջացնելով թեփուկներ: Պտղամիսը սկզբում սպիտակ է, կտրելուց՝ վարդագույն, մանուշակագույն երանգով, հետո՝ մոխրագույն կամ գորշավուն: Հիմենոֆորը խողովակաձև, խողովակները միաշերտ են՝ կարճ, սպիտակ, մոխրագույն, գորշավուն, մինչև 4 մմ երկարությամբ, կազմված են բավականին մանր անցքերից: Տարածվածությունը: Հայաստանում հայտնաբերվել են տվյալ սնկի եզակի պտղամարմինները Իջևանի ֆլոր. շրջ.՝ «Դիլիջան» ազգային պարկ, Ախնաբատի կենու անտառի շրջակայք: Բնապահպանական միջոցառումներ: Հայաստանում պահպանվում է «Ախնաբատի կենի» արգելավայրում:
-----	--	--

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող

	Դասակարգումը	Անվանումը
1.	Բիբերշտեյնազգիներ	Բիբերշտեյնիա բազմաբաժան
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հայտնի է Երևանի և Դարեղե իսի ֆլորիստիկական շրջաններում: Տեսակի տարածման շրջանի մակերեսը չի գերազանցում 5000 քառ. կմ–ից, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից: Տեսակի հիմնական արեալը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս: Նշված պատճառը թույլ է տալիս սպառնալիքի կատեգորիան իջեցնել մինչև NT: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

2.	Ցախակերասագգիներ	Կտակենի Տիգրանի
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Համարվում էր Հայաստանի Էնդեմիկ, բայց վերջերս հայտնաբերվել է 1 պոպուլյացիա Վրաստանում: Հայաստանում հայտնի է հինգ ֆլորիստիկական շրջաններում: Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: Ներկայումս տեսակի գոյությանը ուղղակի սպառնալիք բացակայում է: Սակայն քանի որ այն աճում է գյուղատնտեսական հանդակների և բնակավայրերի ընդարձակման ինտենսիվ յուրացման տարածքներում, բնակության շրջանը կարող է կրճատվել: EOO 4500 քառ. կմ է, AOO 40 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 8: Հայաստանում լայն տարածում ունենալու պատճառով սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև NT: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:
3.	Էբենագգիներ	Խուրմա կովկասյան
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տեսակը բավականին լայնորեն տարածված է Հայաստանում (Իջևանի ֆլորիստիկական շրջանից մինչև Մեղրու շրջան): Սակայն անտառներում հանդիպում է առանձին ծառերի տեսքով և մեծ պոպուլյացիաներ չի առաջացնում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա: Ներկայումս տեսակի գոյությանը ուղղակի վտանգ չի սպառնում, բայց աճելով անտառներում, որոնք ենթարկվում են տրանսֆորմացիայի, կարող է կրճատվել տեսակի բնակության շրջանը: EOO 12800 քառ. կմ է, AOO՝ 30 քառ. կմ: Լոկալիտետները՝ 6: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև NT: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

4.	Հաճարագգիներ	Կաղնի արաքսյան
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հարավային Հայաստանում՝ Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջանների տերևաթափ նոսրանտառների գերակշռող տեսակներից է: Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ (որպես Quercus infectoria ssp. boissieri) 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: Ներկայումս այս տեսակի վիճակին ուղղակի սպառնալիք չի սպառնում: Սակայն, կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման նպատակով տարածքների յուրացման և, հատկապես, լեռնաարդյունահանող արդյունաբերության ինտենսիվացման հետ, կարող է նվազել տեսակի բնակության շրջանը: EOO 1200 քառ. կմ է, AOO՝ 120 քառ. կմ: Լոկալիտետները՝ 8: Քանի որ ներկայումս տեսակը բավականին առատ հանդիպում է հանրապետության մեծ տարածքներում, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև NT: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:
5.	Շրթնագգիներ	Վիշապագլուխ Ռուշի
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տեսակը ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում: Հայաստանում հանդիպում է հինգ ֆլորիստիկական շրջաններում: Ներկայումս տեսակի գոյության համար ուղղակի սպառնալիքը բացակայում է: Սակայն քանի որ այն աճում է գյուղատնտեսական հանդակների համար ինտենսիվ յուրացվող տարածքներում, կարող է կրճատվել նրա բնակության շրջանի մակերեսը: EOO 9800 քառ. կմ է, AOO 60 քառ. կմ է: Լոկալիտետները՝ 10: Տեսակի տարածման հիմնական արեալը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս: Հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազել է մինչև NT: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված չէ:

6.	Շուշանազգիներ	Շուշան հայկական
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Տարածված է Հյուսիսային Հայաստանի զգալի տարածությունների վրա և ներկայումս ուղղակի վտանգ նրա գոյության համար չկա: Մակայն բարձր արժեք գեղազարդային հատկանիշների շնորհիվ բավական ակտիվ ոչնչացվում է ծաղկեփնջերի համար և կարող է առաջանալ լուրջ սպառնալիք տեսակի համար: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ–ից պակաս, լոկալիտետները՝ 10: Նկատի ունենալով տեսակի համեմատաբար լայն տարածումը և սահմանակից երկրներում (Ղարաբաղ, Հյուսիսարևելյան Անատոլիա) այլ պոպուլյացիաների առկայությունը՝ սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է մինչև NT: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:
7.	Սպնդուկազգիներ	Սպնդուկ միջին
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Լայնորեն տարածված է Հայաստանում, տեսակի պոպուլյացիան կազմված է 5 լոկալիտետներից, տարածման շրջանը 20000 քառ. կմ–ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աճման պայմանների փոփոխության պատճառներով: Կապված շատ մեծ ընդհանուր տարածման հետ՝ սպառնալիքի կատեգորիան նվազեցված է մինչև NT: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

8.	Մորմազգիներ	Փքաբույս արևելյան
		Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է: Հայտնի են 6 փոքր թվով անհատներից կազմված պոպուլյացիաներ 4 ֆլորիստիկական շրջաններում: Մեկ պոպուլյացիայի գոյությունը հաստատման կարիքունի (1922 թ. հավաք): Տեսակին սպառնում է կլիմայի գլոբալ փոփոխությունը, գյուղատնտեսական հանդակների ընդլայնումը: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: